

Քրիստոս զինքն հանգուցե իւր ծնաւորքն ամէն : եղիցի, եղիցի¹ :

Էջ 385. (Յեռնաստիոյ շրջան) : Նիկողոս Ղալարին, Հոռոմ Սիմային, Վարազին, Տրդատին, Յովսէփին, Մարիամին, եւ այլ ամենայն զարմից եւ զաւակաց նոցին :

Այնպէս որդին Տէր Խաչատուրն գնեց զՆորհատին Խաղինարտն իւր հոգւոյն եւ իւր ծնաւորացն հոգւոյն եւ եղ յիշատակ ի դուռն սուրբ Հրեշտակապետն ի թիւ Ռ. 21. Լ. 2. Զ. Աստուած ողորմի իւր ննջեցորդն հոգին. ամէն : Հայր մեր² :

Էջ 972. «Փառք եռանձնեայ... աւարտեցաւ քրիստոսահիմն... այս կտակ յամի ութ հարիւրորդի ինըսներորդի թուականութեան հայկազուն ազգիս տոմարի : Չեւամբ յագնամիլ եւ անարհեստ գրչի, թումայ սուտանուն քահանայի... (Էլ շարունակեալ աւանդ յիշելու սրբոցն ու արարել : Գրչի արարչ իողմանք է) :

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

(Շարունակելի.)



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱՆՅԱՆՏ ԱՂԱՆԳԱԻՐՆԵՐ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Ժ. Զ. ՈՒ Ժ. Գ Ա Ր Ե Ր ՈՒ Ս

(Շարունակութիւնն.)

Ե.

Մեխլուի ժամանակաբանութեան մասին պէտք է ասենք, որ բաւական մութ է այս : Որոշ թուականներ չկան. մնում է ժամանակաբանական սահմաններ գծել :

Ըստ Չաքարիայի՝ Մեխլուն Գանձասար է գնացել Աղուանից Յովհաննէս Ը. կաթուղիկոսի ժամանակ, թէ այս կաթուղիկոսը երբ է գահ բարձրացել, յայտնի չէ : Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը թէեւ Յովհաննէսի կաթուղիկոսանալը գնում է 1578ին¹, սակայն այն կուռանը, որի վրայ հիմնում է, այն է Արցախի Բարսուս գիւղի գրչագիր աւետարանի յիշատակարանը, կամ է հայոց ՌԻԸ թ. աւանդ, որ հաւա-

սար է 1579ին եւ ոչ թէ 1578ին¹ : Նոյն հեղինակը Յովհաննէս Ը.ի մահը գնում է 1588 թուականի ու 1602ի արանքում² : այս թուականների համար Բարխուդարեանը որեւէ հիմք ու աղբիւր չէ մատնանշում, ուստի յիշեալ ժամանակակէտն ընդունելի չէ : Այսպիսով Մեխլուի ժամանակաբանութեան հաստատուն սկզբնական կարելի է համարել առ այժմ 1579 թուականը միայն :

Արեղահալածի Երեւան քաղաքը գալու ժամանակի սահմանները որոշելու հիմքն Ամիրգունա խանի ու Աւետիս կաթուղիկոսի ժամանակաբանութիւնն է : Ամիրգունա խանը կուռակալ է նշանակուած Երեւանը տաճիկներից առնելուց յետոյ, որ կատարուում է Շահաբասի ձեռքով 1604ին³ : Ամիրգունան սպանուում է 1625ին⁴ : Աւետիս կաթուղիկոսի մասին սկզբնական մատնանշել չենք կարող, բայց յայտնի վերջնական առ այժմ 1622 թուականն է : Թէեւ Մաղաքիա արքեպ. Օրմանեանը սրա մասին գրում է, թէ «պէտք է 1620 ու 1624 տարիներու միջոցին մեռած կարծել»⁵, սակայն վերջին թուականի 1624ի հիմքը յայտնի չէ : Մնում է առ այժմ վերջնական ընդունել Գրանաղցու ինքնաձեռագիր աստուածաշնչի յիշատակարանի մէջ յիշուած թուականը, որ է 1622⁶ : Այսպիսով Մեխլուի՝ Երեւանի կողմերը գալը կարող էր տեղի ունենալ 1604—1622 թուականների արանքում :

Ինչպէս ասել ենք, Մեխլուին սաստող ու բանադրող հոգեւորականներից անուն անուն յիշուած են՝

1. Կիրակոս Տրապիզոնցին,
2. Սարգիս Յարենեցին,
3. Պողոս Բարեցին ու
4. Մովսէս Խոտանեցին :

Սրանցից ամենավաղ մեռել են երկրորդն ու երրորդը — Յարենեցին ու Բարեցին, այն էլ միեւնոյն տարին — 1620 թուականին⁷ :

¹ Մակար եպիսկոպոս Բարխուդարեան. «Արցախ», Բագու. 1895, էջ 318 :
² Բարխուդարեան, «Պատմութիւն Աղուանից», Բ, 59—60 :
³ Գաւրիթեցի, գլուխ ԾԶ, էջ 634 :
⁴ Գաւրիթեցի, գլուխ ԾԶ, էջ 638—639 : Յովհ. եպիսկ. Շահաթուրեանը Երեւանի խաների ժամանակաբանական ցանկի մէջ Ամիրգունա խանի համար թուական չէ գնում : «Մտորագրութիւն», Բ, հաս. Էջմիածին, 1842, էջ 137 :
⁵ Մաղաքիա արքեպ. Օրմանեան. «Ազգապատում», էջ 2340—2342 :
⁶ Գրանաղցի, 612 :
⁷ Գաւրիթեցի, ԻԱ, էջ 260, ԻԳ, 283 :

¹ Մակար եպիսկոպոս Բարխուդարեան. «Պատմութիւն Աղուանից», հատոր Բ, Թիֆլիս 1907, էջ 23 :

Նշանակում է՝ ազդեցիկ հոգեւորականութեան՝ աղանդապետի դէմ հանդէս գալը 1620ից յետոյ դնել չէ կարելի:

Արեղահալածի՝ Երուսաղէմ գնալու ժամանակի սկզբնակէտը որոշելու հնարաւորութիւն է տալիս Գրիգոր Եպիսկոպոսի մասին արուած յիշատակութիւնը: Աւերջինս անշուշտ Գրիգոր Պարոնտէրն է, որ Երուսաղէմի պատրիարք է դարձել 1613 թուականին¹ եւ պարել է մինչեւ 1645ը²: Այսպիսով այս դէպքի սկզբնակէտն անվիճելիօրէն 1613 թուականն է, սակայն վերջնակէտ որոշելու կռուաններ չկան: Յամենայն դէպս, վերջնակէտը մինչեւ Պարոնտէրի մահը կամ Դարանաղցու վախճանը (1643 թ.)³ կամ սրա «ժամանակագրութեան» վերջին թուականը (1640)⁴ յետաձգելը հնարաւոր չենք համարում:

Առ այժմ, մինչեւ արեղահալածի ժամանակաբանութեան մասին նոր տուեալների յայտնագործումն, ընդհանուր սահմաններով կարելի է ասել, որ Մեսիյուսի ասպարէզ գալն ընկնում է ԺԶ. դարի վերջին քառորդում ու ԺԷ. ի առաջին տասնամեակներում⁵:

2.

Արեղահալածութիւնը, որ ծնունդ առաւ եւ տարածուեց բուն Հայաստանում, հերձուածողական մի չափաւոր հոսանք էր: Բոլորովին այլ պատկեր էր ներկայացնում աղանդաւորական միւս շարժումը ԺԷ. դարում, մի շարժում, որ հանդէս է գալիս հեռաւոր հայ գաղութներից մէկում — Նոր-Ջուղայի մէջ:

Նոր-Ջուղան այն ժամանակ արդէն սկսում էր աչքի ընկնող դեր խաղալ հանրային ու եկեղեցական կեանքում, իբրեւ հայ առեւտրական անմենանշանաւոր կենդրոններից մէկը: Գա-

1. Գարանաղցի, առաջաբան, էջ 109:
2. Օրմանեան, «Ազգապատում», 2395:
3. Գարանաղցի, առաջաբան, էջ ԾԷ:
4. Գարանաղցի, առաջաբան, էջ ԿԶ ու բնագիր, էջ 581:
5. Մեսրոփը արքեպիսկոպոս Մերստեանը Համախոթեմի նկարագրութեանը նուիրած գրքում (էջ 187) էր Զաքարիա սարկաւազից քաղելով մէջ է բերում այսպիսի հատուած:

«Ի նմին ժամանակի յամի Տեառն 1610 եկն ի քառաքեա Միսու վարդապետ կոչեցեալ մտրեցուցին Ուտիացի, որ եւ հալածական եղև ի խանէն եւ ի կաթուղիոսէն»:
Եթէ չենք սխալում, Զաքարիան այս հատուածը չունի: Արդեօք Միսուսեանի ձեռքի տակ եղև է Զաքարիայի այլ, անյայտ օրինակ, թէ հատուածը քաղուած է ուրիշ տեղից եւ յետոյ շփոթմամբ վերագրուել է Զաքարիային, չենք կարող որոշել:

ղութի հասարակութիւնը գլխաւորապէս կազմուած էր առեւտրականներից ու արհեստաւորներից: Որչափով խոշոր առեւտրական կապիտալի մի հատուածը հանդէս էր գալիս, իբրեւ հայ եկեղեցու պաշտպան, իսկ միւս հատուածը հրապարակ ելնում, իբրեւ կաթողիկոսութեան հետեւորդ, այնչափով էլ այս վերնախաւից նեղուող մանր քաղքենին — մանր առեւտրականներն ու արհեստաւորները — իրենց հատային պայքարը պիտի վարէին կրօնական եկեղեցական դրօշներով՝ հակում ունենալով յարելու աղանդաւորական հոսանքների:

Գաղափարական պայքարի այսպիսի բռնկում տեղի է ունենում Նոր-Ջուղայում՝ կրելով խիստ արմատական բնոյթ: Այս շարժման մասին տեղեկութիւններ հաղորդում է Խաչատուր վարդապետ Ջուղայեցին «Պատմութիւն պարսից» երկասիրութեան մէջ: Այս մատենագիրը մօտ դար ու կէս հեռու է նկարագրած դէպքերից: Նա ոչ ժամանակակից էր եւ ոչ էլ կարող էր ժամանակակիցներից իմացած լինել այն, ինչ որ պատմում է: Անաւարակոյս, նա ունեցել է գրական աղբիւր, որի մասին դժբախտաբար չէ յայտնում ոչինչ¹: Նրա տուած տեղեկութիւնները որքան էլ համառօտ են, այնուամենայնիւ եւ շատ մեծ արժէք ունին հայ աղանդների, մանաւանդ ձախակողմեան աղանդների պատմութեան տեսակէտից:

«Այս եղև, — պատմում է Ջուղայեցին, — ի 1091 թուականիս հայոց եւ յամի Տեառն մերոյ 1642, ի ժամանակի առաջնոյ Շահ-Սէֆի արքայի»:

«Զայսու ժամանակաւ յարեաւ ոմն ժանդ եւ դժնաբարոյ Թօմաս անուն, որ խօսէր զհայհոյութիւնս ընդդէմ ուղղափառ հաւատոյս Բրիտանոսի, որ էր չարագոյն եւ դժնդակագոյն, քան զԱրիոս, զՆեստոր եւ զՍատուկեցիս², ...

Խաչատուր Ջուղայեցին հակիրճ թւում է Նոր-Ջուղայի աղանդաւորի աշխարհահայեացքի հիմնական կէտերը: Սրանից տեսնում ենք, որ խակապէս այս աղանդը «չարագոյն» էր, այսինքն աւելի արմատական էր, քան մինչ այդ երեւան եկած հայկական աղանդները: Մասնաւորապէս արեղահալածի հետ առագրելով պէտք է ասենք, որ Թօմասի համեմատութեամբ Մեսիյուսն մի կա-

1. Ցանկալի էր, որ Նոր-Ջուղայի հարցասերները վաւերի լի անուս օրնուններ կատարէին այս ուղղութեամբ:
2. Խաչատուր Արեղայի Ջուղայեցոյ «Պատմութիւն պարսից» աշխատութեամբ բարդէն վարդապետի Ապուստեանց. Վաղարշապատ, 1905, էջ 115:

տարեալ գառ է, այն ինչ Նոր-Ջուղայի աղանդաւորն օժտուած է պողպատէ եղջիւրներով:

Ինչ էր քարոզում թօմասը:

«Նախ՝ զՔրիստոս Հօր Աստուծոյ հաւասար ոչ ընդունէր, այլ Քրիստոս սոսկ մարդասէր եւ երջանիկ սուրբ կոյնն Մարիամ՝ մարդածին:

Երկրորդ՝ համանդամայն սատուկեցւոց զյարութիւն եւ զդատաստան ոչ ընդունէր:

Երրորդ՝ զխաչն Քրիստոսի, զպատարագն հաշտարար եւ զհաղորդութիւնն սուրբ հայհոյէր իբրեւ զմահմետականս:

Չորրորդ՝ զեղեալ կանոնս առաքելականս եւ զաստուածեղէն սահմանս եւ եօթն խորհուրդս սրբոյ եկեղեցւոյ անարգէր:

Հինգերորդ՝ զառաջնորդս, զվարդապետս, զքահանայս եւ զպաշտօնեայս սրբոյ եկեղեցւոյ պախարակեալ արհամարհէր եւ խաբերայս զնոսա կոչէր:

Եւ այսպէս այրս այս դժնդակ եւ անագորոյն կամէր նոր իմն չարագոյն հերձուած մոծանել յեկեղեցին Քրիստոսի¹:

Հասկանալի է, որ իշխող եկեղեցին չէր կարող հանդուրժել այս «նոր իմն չարագոյն» հերձուածը: Նոր-Ջուղայի այն ժամանակուայ առաջնորդը, խաչատուր կեսարացին հրամայում է փակել բոլոր եկեղեցիները, գումարում է «Սիւնհոգոս մեծ», ուր հրաւիրում է եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանայներին ու ժողովուրդին՝ թօմասի դէմ միջոցներ ձեռք առնելու համար:

«Յետ բաղում անգամ խրատելոյն զնա, եւ նորա ոչ գալոյն յուղղութիւն, ի բաց եհատ զեղխայթեալ եւ զպականեալ անդամն ի յողջ անդամոյն Քրիստոսի, զի մի փոքր մի եւս մնացեալ ի յայլ յողջ անդամն փոխադրեսցի զայն ապականութիւն»²:

Ջուղայեցին դժբախտաբար բաւականանում է այս ընդհանուր բռնբրով եւ չէ յայտնում, թէ ինչ միջոցներ գործադրուեցին աղանդաւորի նկատմամբ. արդեօք բաւականացաւ սոսկ բանադրանքով կամ եկեղեցուց արտօքսելով, զիմեցին մարմնական պատիժներ կիրառելու միջոցին էլ, արդեօք հայկական միջավայրում խնդիրն սպառուեց, թէ այս անգամ էլ կողմերից մէկին օգնութեան հասան շահն ու խանն իրենց ֆարրաշներով: Յամենայն դէպս,

այն հանդամները, որ աղանդաւորի դէմ հանդէս է եկել ոչ թէ միայն առաջնորդը ածնական հեղինակութեամբ, այլ «մեծ սիւնհոգոսն», այսինքն հաւատաքննական մի համագումար, ցոյց է տալիս, որ թօմասի առաջ բերած գաղափարական ցնցումն ու հոգիների ալեկոծութիւնը խիստ մեծ է եղել:

Է.

Խաչատուր Ջուղայեցին չէ հաղորդում, թէ ինչ հասարակական շերտից էր գաղութի աղանդաւորը: Նրա մասին ասածներէից կարելի է եղրակացնել, թէ նա աշխարհական էր, հակառակ դէպքում յիշուէր նրա հոգեւորական աստիճանը: Իսկ թէ առեւտրական էր նա, արհեստաւոր, կամ գիւղացի, թէ վարպետ կամ վարպետացու, ունէր արդեօք հետեւորդներ թէ ոչ, — այս չէ կարելի իմանալ «Պարսից պատմութիւնից»:

Բարեբախտաբար այս մասին մեզ տեղեկութիւններ տալիս է մի այլ պատմագիր, որ ժամանակով աւելի մօտ է թօմասին: Այս ժամանակակից մատենագիրը կրկին ջաքարիա սարկաւագն է:

Ջաքարիան իւր «Պատմագրութեան» Բ. հատորում պատմելով Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցու դէմ պայքարող հոգեւորականներից մէկի-Երեւանցի Ռնոփրիոս եպիսկոպոսի մասին, որ յայտնի է նաեւ Ռնոփրիոս կարկուտ անունով, յիշատակում է, թէ ինչպէս կաթուղիկոսը դատաստան է հրաւիրում նշանաւոր հոգեւորականներից՝ կարկտի ըմբոստ արարքները քննելու համար: Ռնոփրիոսի հարցաքննութեանը ներկայ է լինում Նոր-Ջուղայեցի մի հայ Սեւ Պետրոս անունով, որը կարկտի մասին խօսելով հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Նոր-Ջուղայի աղանդաւորի մասին էլ:

«Յորժամ եկն Փիլիպպոս կաթուղիկոսն յԱսպահան, — պատմում է Սեւ Պետրոսը, — եւ սա (կարկուտը. Թ. Ա.) սարկաւագ էր ընդ նմա: Յաւուր միում երթայր դերձակն թումիկ ի քաղաքն, եւ սա զկնի նորա բացագոյն երթայր եւ հայհոյէր: Եւ ես զկնի սորա գնայի եւ ասացի սմա»:

- Ընդ ում խօսիս, սարկաւագ:
- Եւ սա ասէ.
- Ո՞վ է սա, որ գնայ առաջի մեր:
- Ասացի.
- Ուսթա թումիկն է:
- Ասէ.

¹ Ջուղայեցի, 115:
² Ջուղայեցի, 116:

— Սա՛ է հերձուածող Թու՛միկն:

Ասացի:

— Այո:

Եւ սա ասէ.

— Ահա տեսներ՛մ, զի հրեշտակ բարձր ի վեր քան զգլուխն կայ եւ երկու դեւ ի վերայ երկուց ուսոցն նստեալ են, եւ դա խօսի ընդ նոսա՞¹:

Ըստ Առաքել Գաւրիժեցու՝ Փիլիպպոս կաթողիկոս Աղբակեցին Ասպահան է գնում հայոց Ռ2Զ = 1637 թուականին եւ այնտեղից Վաղարշապատ է վերադառնում Ռ2Է = 1638ին, սեպտեմբերի 20ին²: Այսպիսով ուրեմն Սեւ Պետրոսի պատմած դէպքը տեղի է ունեցել 1637 կամ 1638 թուերին: Խաչատուր Զուղայեցու ասելով կեսարացի առաջնորդը հերձուածող Թումասի դէմ միջոցներ է ձեռք առել 1642 թուականից: Տեղի նշյնութիւնը (Նոր-Ջուղա), անուան նշյնութիւնը (Թումաս, Թումիկ), հերձուածող լինելու հանգամանքն ու ժամանակի մտտութիւնը ոչ մի կասկած չեն թողնում, որ Ջաքարիա սարկաւազի հերձուածող Թումիկը Խաչատուր Զուղայեցու յիշած «ժանդ եւ դժնաբարոյ» Թումասն է:

Ջաքարիայի հատուածը ցոյց է տալիս նախ, ու Թումիկի քարոզչութիւնն սկսուել է 1642 թուականից շատ առաջ, այնպէս որ աղանդաւորն 1637—1638ին արդէն հռչակուած էր, եւ ուղղափառների ատելութիւնն այնքան բորբոքուած, որ փողոցներում նրան հետապնդում էին հայհոյանքներով եւ պատմութիւններ յերկրում նրա ուսին նստած դեւերի մասին:

Յիշեալ հատուածը, բացի սրանից, խիստ կարեւոր է մանաւանդ մի այլ տեսակէտից: Այս հատուածը մեզ հնարաւորութիւն է տալիս որոշելու այն հանրային խաւը, որն այս աղանդի երկնողն էր: Այս հանրային շերտն արհեստաւորութիւնն էր, մասնաւորապէս դերձակների «համարուեստը»³, համբարութիւնը, որի շարքերում Թումիկն «ուստա» էր, վարպետ: Արեւելահայ գրականագէտ Գաւրիթ Անանունը՝ Ռուսահայերի հասարակական զարգացումը ԺԸ դարում՝ աշխատութեան առաջին հատորի մէջ⁴

հիմնուելով Հ. Ղուկասեանի տուեալների վրայ՝ շեշտել է այն կապը, որ ԺԸ դարում եղել է մի կողմից՝ հայ բողոքականութեան ու միւս կողմից՝ արհեստաւորութեան, մասնաւորապէս վարպետների ու վարպետացունների շարժման միջեւ: Հայ հասարակական մտքի պատմութեան մէջ աղանդի ու արհեստի նման կապ առաջին անգամ տեսնում ենք ԺԷ դարում յանձին հերձուածող դերձակ Թումիկի:

Ջաքարիան չէ յայտնում, թէ կարկտի դատաստանը որ թուականին կամ ԺԷ դարի որ տասնամեակում է լինում: Մեզ անհրաժեշտ է այս դէպքի մտաւոր ժամանակը որոշելը: Սրան կուուան է ծառայում այն հանգամանքը, որ յիշեալ դատին ներկայ են լինում, ի միջի այլոց, նաեւ Աղուանից Պետրոս Գ. Խանձկեցի կաթողիկոսն ու Գողթան գաւառի առաջնորդ Խաչատուր վարդապետը¹: Խանձկեցին գահ է բարձրանում 1653ին եւ մեռնում 1675ին²: Իսկ Խաչատուր վարդապետը, ինչպէս ցոյց են տալիս Ջաքարիա Ագուլեցու «Օրագրութեան» կամ, աւելի ճիշտը, «Գաւթարի» պատահիկները, մեռել է հայոց 1113 = 1664 թուի Յուլիսի 24ին³: Նշանակում է կարկտի դատը կարող էր տեղի ունենալ 1653—1664 թուականների արանքում:

Ջաքարիան յիշեալ Սեւ Պետրոսի մասին ասում է, թէ «ունէր հերձուած ինչ»⁴: Արդեօք ի՞նչ հերձուած էր այս: Եթէ Սեւ Պետրոսը կաթողիկ լինէր, ապա մատենագիրն այսպէս անորոշ չէր գրեր, այլ պարզապէս կ'ասէր, թէ կաթողիկ էր, որովհետեւ կաթողիկութիւնն այն դարում հանրայայտի երեւոյթ էր: Սեւ Պետրոսը հերձուածող Թումիկին ժամանակակից էր: Սեւ Պետրոսը Նոր-Ջուղայեցի էր, այն գաղութից, որտեղ քարոզել էր Թումիկն իւր հերձուածը: Սեւ Պետրոսն «ունէր հերձուած ինչ», որի մասին անորոշ լսել է Ջաքարիան: Այս տուեալների վրայ հիմնուելով չէ՞ կարելի արդեօք ենթադրել, որ Սեւ Պետրոսը հաւանօրէն «ժամա» Թումասի հետեւորդներից մէկն էր: Գրական պատասխանը կ'ապացուցէր, որ Նոր-Ջուղայի աղանդաւորն ունեցել է հետեւորդներ, որոնք հաւա-

¹ Ջաքարիա, Բ. հատոր, Վաղարշապատ, 1870, էջ 69:

² Գաւրիժեցի, ԳԼ. ԻԵ. էջ 318 ու 321:

³ «Համարուեստ» բառը «համբարութիւն» բառի իմաստով գործածելը, թեեւ հազուադէպ, սակայն պատահում է: Հմմտ. «Գիւան հայոց պատմութեան», գիրք Ժ: — Մանր մատենագիրք, Թիֆլիս, 1912, էջ 411:

⁴ Գ. Անանուն, «Ռուսահայերի հասարակական զար-

գացումը ԺԸ դարում», Ա. հատոր, Բագու 1916, էջ 240—241:

¹ Ջաքարիա, Բ. 68—69:

² Բարխուդարեան. «Պատմութիւն Աղուանից», Բ. 66—68:

³ Մեքորմբ արքեպիսկոպոս Սմբատեան. «Նկարագիր սուրբ կարապետի վանուց Երնջակայ», Տիֆլիս, 1904, էջ 209:

տարիմ էին մնացել նրա ուսմունքին 1642/ից, այն է նրա դէմ միջոցներ ձեռք առնելու թուականից մէկ կամ երկու տասնամեակ յետոյ էլ, 1653/ից մինչեւ 1664ը: Հետեւորդների գոյութեան փաստն աւելի լաւ է բացատրում, թէ ինչու կեսարացի առաջնորդն անպայման անհրաժեշտ էր համարել գումարել «սիւնհոգոս մեծ»:

Ը.

Այժմ մեզ մնում է թուօցիկ շջափել մի խնդիր էլ, թէ ինչ առնչութիւն ունի դերձակ թուօցիկի աղանդը մի կողմից բուն հայկական հերձուածների — հին ու նոր թոնդրակեցոց հետ ու միւս կողմից՝ եւրոպական բողոքականութեան հետ:

Նախապէս հարկաւոր է մի վերապահութիւն: Մինչդեռ «նոր» թոնդրակեցոց դաւանանքի մասին դիտողութիւններ տալու համար կայ այնպիսի մի հաստատան կուսան, որպիսին նրանց հաւատարմասն է, որ կրում է «Բանալի ճշմարտութեան» անունը, դժբախտաբար հին թոնդրակեցոց ու թուօցիկի աշխարհահայեացքի ու դաւանանքի մասին սրանց ձեռքով գրուած անմիջական աղբիւրներ չկան, ուստի եւ ուսումնասիրողները հարկադրուած են հիմնուելու աղանդին հակառակորդ եղած մատենագիրների աւածի վրայ: Սակայն այս հիմնուելը ոչ թէ արագուցում է բացարձակ վստահութիւն յիշեալ աղբիւրների նկատմամբ, այլ միայն պայմանական օգտագործումն այն աղբիւրների, մի օգտագործում, որի ժամանակ միշտ ըսելի պիտի համարել ուսումնասիրողի շունչը, թէ՛ եթէ ճիշտ է աղբիւրի հաղորդածն, ապա սրանից պէտք է բըշխեցնել այս կամ այն:

Խաչատուր Զուղայեցին թուօցիկի քարոզութեան առաջին կէտի մասին գրում է, թէ քրիստոսին մարդ էր անուանում եւ Մարիամին մարդածին: Արիստակէս Լաստիվերտցին հին թոնդրակեցոց վերաբերմամբ այս չէ վկայում, իսկ Գրիգոր Նարեկացին հաստատում է, որ իրօք թոնդրակեցիք Յիսուսին մարդ էին համարում, որից հետեւում է, թէ Մարիամին էլ մարդածին էին հաշուում: Նարեկացին անշուշտ այս է ուղում ասել, երբ շեշտում է հին թոնդրակեցոց «մարդապաշտ ուրացութիւնն, որ դարձել է եւ անդապաշտ ուրացութիւն»¹: Նոր թոնդրածեալ քան զկուսապաշտութիւն:

կեցոց հաւատարմատը «Բանալի ճշմարտութեանը» շատ որոշակի Յիսուսին անուանում է «Նոր Ադամ», «Մարդ Յիսուս», «Նոր մարդն Յիսուս», «Նոր արարած եւ ոչ արարիչ», իսկ Մարիամին՝ սոսկ «կին»¹:

Զուղայեցու երրորդ ու չորրորդ կետերից իմանում ենք, որ թուօցիկը մերժում էր խաչը, պատարագը, հաղորդութիւնն ու ընդհանրապէս եօթը խորհուրդներն, այլ եւ եկեղեցական կանոնները: Հին թոնդրակեցոց մասին Լաստիվերտցին վկայում է, թէ նրանք «զփրկութեան մերոյ զնշանն եւ զտէրունական յաղթութեան զգէնն... խորտակէին անամութարար: Յայտնի է Բաղմաղբիւրի խաչի պատմութիւնը, որը թոնդրակեցիք «մըձով հարեալ... մանրեալ յերկիր ընկեցին»²: Նոյնը հաստատում է նաեւ Նարեկացին՝ ասելով, թէ նրանք չէին ընդունում «զնշանն երկրպագեալ, զոր Աստուածն մարդացեալ յուն իւր բարձեալ կրեաց»³: Նոր թոնդրակեցիք նոյնպէս բացատրում են «զպատկերս առնել, զարծաթ եւ ոսկի ի ձեւ պատկերի... առնել եւ երկրպագանել»⁴: Ինչ վերաբերում է մնացածին, ապա Լաստիվերտցին ասում է, որ «բնաւ ոչ ընդունէին ոչ զմկրտութիւն եւ ոչ զմեծ եւ զսարսափելի խորհուրդ պատարագին... եւ ոչ զկարգաւորութիւն պահոց»⁵: Իսկ Նարեկացին աւելի մանրամասն հաստատում է, թէ ժխտում էին ձեռնադրութիւնը, հաղորդութիւնը, մկրտութիւնը, կիրակին, ծննդադրութիւնը, պսակը ու մատաղը⁶: Նարեկացին աւելի շատ մեղադրանք է բարդում, քան Լաստիվերտցին: Սակայն երկուսն էլ համաձայն են, որ հին թոնդրակեցիք ժխտում էին մկրտութիւնն ու հաղորդութիւնը: Նոյնը չէ կարելի ասել Նոր թոնդրակեցոց մասին: Սրանք խորհուրդներից յատկապէս ընդունում են մկրտութիւնն ու հաղորդութիւնը եւ ժխտում գրոշմը, կարգ քահանայութեանը, վերջին օժումն ու պսակը: «Չորք են, որ զմարդս փրկեն, — գրում է «Բանալին», — նախ ապաշխարութիւն, երկրորդ՝ ուղիղ դաւանութիւն, երրորդ՝ սուրբ մկրտութիւն եւ չորրորդ՝ սուրբ պատուական մարմին եւ արիւն

1 «The Key of Truth», Fred. Conybeare, Oxford, 1898. «Բանալի ճշմարտութեան», էջ 11, 12, 29, 45 ու 51—52:
 2 «Արիստ. Լաստիվերտցի Պատմութիւն», Թիֆլիս, 1912, էջ 157:
 3 «Գրքը թղթոց», էջ 499—500:
 4 «Բանալի ճշմարտութեան», էջ 19:
 5 Լաստիվերտցի, 162:
 6 «Գրքը թղթոց», 499—500:

1 «Գրքը թղթոց», Թիֆլիս, 1901. «Թուօցի Գրիգորի Նարեկացի, զոր գրեաց ի հոյակապ եւ ականաւոր վարքն կճանայ...», էջ 499:

տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Դրոշմ, կարգ քահանայութեան, վերջին օժուժ եւ պսակն ոչ են փրկութիւն հոգւոց մերոց, այլ են անհարկք եւ ոչ հարկաւորք¹: Այսպիսով համեմատելով Թուժիկի աղանդը հին ու նոր թոնդրակեցոց հետ՝ տեսնում ենք, որ այն աւելի հեռու է նոր թոնդրակեցիներէից եւ մօտ է հիններին, սակայն վերջիններիցս աւելի արմատական է, որովհետեւ ժխտում է բոլոր խորհուրդներն ու եկեղեցական հին կանոնները:

Հինգերորդ կէտում ասուած է, թէ Նոր-Ջուղայի աղանդաւորը պախարակում, արհամարհում եւ խաբեբայ էր կոչում բոլոր եկեղեցականներին: Լաստիվերտցին յիշատակում է, թէ հին թոնդրակեցիք « զեկեղեցի եւ զեկեղեցւոյ կարգաւորութիւն բնաւ ոչ ընդունէին »: Նարեկացին հաղորդելով, որ նրանք մերժում են ձեռնադրութիւնը, կրկնում եւ շեշտում է հին թոնդրակեցոց « ինքնաձեռն քամահանաց քահանայութիւնն »: Սրանով ուզում է ասել, թէ նուիրապետական ձեռնադրութիւն չկար, այլ իրենք իրենց էին « ձեռնադրում », աղանդաւորների սպասաւորութեան գործին կոչւում առանց բարդ արարողութիւնների ու դժուարութիւնների, լոկ ներքին մղումից դրդուած: Աղանդի ռամկավարութեան նշանացոյց էր անշուշտ այս երեւոյթը: Նոր թոնդրակեցիք խիստ լեզուով յարձակում են եպիսկոպոսների ու կաթողիկոսների վրայ. « զի նոքա հպարտ եւ բարձրամիտ եւ մանաւանդ վաճառողք իշխանութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նա եւս են անօրինողք սուտ օրինաց եւ եւս են ագահ եւ սուտ իրաց հանձարողք »²: Նոր թոնդրակեցիք ունին իրենց նուիրապետութիւնը, սակայն վերջինս ծայրաստիճան պարզ ու ռամկավարական բնոյթ ունի: Ուրեմն այս տեսակէտից հին ու նոր թոնդրակեցիք եւ Թուժիկն ընդհանրապէս նման ու մօտ են իրար:

Ամենից հետաքրքրականը Ջուղայեցու յիշած երկրորդ կէտն է, ըստ որի Թուժիկը « համահանգոյն Սատուկեցոց զյարութիւն եւ զգատաստան ոչ ընդունէր »³: Գժբախտաբար ոչ Լաստիվերտցին ու ոչ էլ Նարեկացին որեւէ առթիւ չեն շօշափում այս խնդիրը, որ իմանանք ստոյգ, թէ ինչ էին մտածում այս մասին հին թոնդրակեցիք: Լուսութիւնը կարող է հիմք ծառայել ընդունելու, որ նրանք չէին ժխտում ոչ

մէկն ու ոչ էլ միւսը, հակառակ դէպքում որոշակի կը շեշտուէին այս ծանր մեղադրական կէտերը: Ինչ վերաբերում է նոր թոնդրակեցիներին, ապա պէտք է ասենք, որ սրանք դաւանում էին, թէ « է մի միայն դատաստան եւ ոչ երկու », թէ « վասն կատարածի աշխարհի ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս եւ ոչ որդի, բայց միայն հայր », թէ Յիսուս « հօրն իւրոյ հրամանաւ գալոց է դատել զկենդանիս եւ զմեւեալս »¹: Թուժիկը ժխտում էր յարութիւնն ու դատաստանը: Սրանով Նոր-Ջուղայի աղանդաւորը հանդէս է գալիս իբրեւ քարոզիչ մի հերձուածի, որ ամենից արմատականն ու ձախակողմեանն է հայ աղանդների պատմութեան մէջ: Իշխող եկեղեցու ու իշխող եկեղեցիների համար այս դերձակի ասեղն աւելի վտանգաւոր էր, քան յախուռն Միխայիլի նիզակը:

Կարող էր արդեօք Թուժիկի աղանդը բողոքականութեան անդրանիկ արձագանգներից մէկը ըննել հայ իրականութեան մէջ:

Սրան երկու առարկութիւն կայ: Տեսանք, որ Նոր-Ջուղայի աղանդապետի ուսմունքն աւելի ծայրահեղ ու արմատական բնոյթ ունի ընդհանրապէս, քան հին թոնդրակեցոց ու մանաւանդ նոր թոնդրակեցոց հերձուածը: Բողոքականութիւնը դաւանանքով համեմատաբար աւելի մօտ լինելով նոր թոնդրակեցիներին՝ շատ ու շատ հեռու է Թուժիկի արմատականութիւնից: Երկրորդ առարկութիւնն այն է, որ բողոքականութիւնը միայն 19^{րդ} դարի երրորդ ու չորրորդ տասնամեակներում է հաստատուել Տաճկանում ու Ռուսաստանում եւ այս երկիրներից սփռել իւր ազդեցութիւնը դէպի հարեան արեւելեան երկիրները: Ըստ Աբրահամ Զամինեանի՝ բողոքական « Պորտի (ընկերութիւն է, Թ. Ա.) քարոզիչներն առաջին անգամ 1827 թուին Պոլիս հասան եւ Բերա թաղում հաստատուեցան »²: Իսկ ըստ Օրմանեանի՝ « Առաջին բողոքական քարոզիչը Կոստանդնուպոլիս հասած էր կաթողիկ հասարակութեան կազմուելէն ետքը (1831 թ.) »³: Ինչ վերաբերում է Ռուսաստանին ու Կովկասին, ապա հանրօրայտի իրողութիւն է, որ բողոքականներն այս երկիրներում հաստատուել են ԺԹ. դարի երրորդ տասնամեակից: Ուստի ամենեւին հաւանական չէ, որ

¹ « Բանալի ճշմարտութեան », էջ 59:
² « Բանալի ճշմարտութեան », էջ 16:

¹ « Բանալի ճշմարտութեան », էջ 29, 61, 62:
² Աբրահամ Զամինեան, « Հայոց եկեղեցու պատմութիւն », Բ. մասն, Նոր Նախիջեան 1909, էջ 214-217:
³ Մաղաբեկ արքեպ. Օրմանեան, « Հայոց եկեղեցին », Կոստանդնուպոլիս 1911, էջ 117:

ժէ. դարի առաջին կէսում արեւելքի հեռաւոր հայ դաղուածներից մէկի մէջ երեւան եկած խիստ արմատական աղանդի արեւմտեան Եւրոպայի բողոքական հոսանքներից որեւէ մէկի ընծիւղը չենի:

Հատ հետաքրքրական կը լինէր ժ.Ձ. ու ժէ. դարերում երեւան եկած հայ աղանդները համեմատել Եւրոպայի, մասնաւորապէս անգլիական հերձուածների հետ: Առադրութիւնը կը պարզէր, որ Մեխլուի շարժումը որոշ չափով նման է, օրինակ, ջոն Վեկլեֆի (ժ.Գ. դար) շարժմանը, իսկ Թուփկի քարոզը շատ ընդհանուր գծեր ունի քուակերների (quakers) վարդապետութեան հետ: (Ամենանշանաւոր քուակերներից Ջորջ Ֆոկսն ու Ջէյմս Կեյլորը նոյն իսկ ժամանակակից են հին Թուփկի միայն այն տարբերութեամբ, որ Թուփկն աւելի առաջ է սկսել իւր քարոզութիւնը, քան անգլիական հնչակաւոր աղանդի այս գործիչները, որոնցից Ֆոկսը ժողովրդականութիւն է ստացել 1649 թուականից, իսկ Կեյլորը՝ 1652ից):

Սակայն հնարաւորութիւն չունենալով այս էջերում նաեւ յիշեալ համեմատութեամբ զբաղուելու՝ վերջացնում ենք մեր յօդուածը, որի նպատակն էր մի քանի հատուածներ մատնանշելով ու ընդգծելով ցոյց տալ, թէ հայ աղանդաւորական շարժման ուշագրաւ ներկայացուցիչներ են Մեխլուն ու Թուփկը, որոնք իրենց արժանի տեղը պիտի ունենան այսուհետեւ հայ հանրային հոսանքների ու աշխարհայեացքների պատմութեան մէջ Սարգիս Մայրազոմեցու, Սմբատ Զարեհաւանցու, Յակոբ ու Մուշեղ Թոնդրակեցիների, Դաւիթ Ծարեցու եւ Յովհաննէս Վահագնունու կողքին:

Երևան, 1925 թ. Յոսևոսար:

ԹԱԴԼՈՍ ԱՆԴԱՐԷՆԿՆՍ



Ր Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ր Ա Ռ Ա Ս Ս Ա Յ Ա Ն Գ Ի Տ Ա Ղ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Հ Յ Յ Ե Ի Է Ն Գ Ի Տ Ա Ղ Ա Ն Լ Ե Զ Ո Ւ Ի Մ Ա Ս Ի Ն

Է.

(Շարունակութիւն):

22. — Կարեւորագոյնն բայց նաեւ ամենէն կնճռոտ խնդիր մըն է քիմ. աւարտներու եւ մասնիկներու յաջող փոխադրութիւնն եւ ասոնց մէջ միօրինակութիւնը: Սակայն այստեղ ի հարկէ մեծ անհամաձայնութիւն կայ, եւ աւարտներուն ու մասնիկներուն տարբերութեամբ բառաձեւերը բոլորովին տարբեր երեւոյթ կ'առնուն: Առնունք վերոյիշեալ վերջին բաղմամբաւ կազմութեան մէջէն propyle բառը: Ասի՝ ինչպէս քիմիական շատ ուրիշներ՝ անթարգմանելի է, ուստի ք գրած է պարզ յըրուէլ (Բ, 429): Այսչափը՝ լաւ. բայց ըստ քի վարդապետութեան (Տարբաբ. Ա, էջ 66) այս -yle աւարտը թարգմանուելու է -աթիւն, եւ այսպէս ալ գրած է Գ՝ «յըրուէլաթիւն» (համա. Բ, էջ 19 եւն): Լ այս աւարտը կը թարգմանէ -ապ, որով՝ «յըրուէլապ», պրոպանիլ-ը², (— ասկէ՝ alcool propyl lique՝ ք «ալքոհլ պրոպիլական», Գ «պրոպիլաձնական» Լ «պրոպիլապիլ») բայց նաեւ բարդութեամբ՝ «պրոպիլապիլ»³: 2 չունի այս բառը. Արդ ասոր կաղեղէնը կ'առնու -ène վերջաւորութիւնը, propylène, զոր ք կը գրէ յըրուէլէն, Լ յըրուէլաթիւն (երկուքն ալ -ène = էն). իսկ Գ «պրոպիլաթիւն» (Բ, 73 եւն): Այս նիւթին ուրիշներուն հետ ունեցած բաղմութիւն բաղադրութիւններէն⁴ ք յիշած է միայն մին՝ propylamine, զոր թարգ-

¹ Նպատակ չունի յիշել թէ յն. propylaion (գշ. propylées) կը նշանակէ՝ նախագուռն, անդաստակ, գաւիթ եւն:

² Արդէն Հ. Բ. Նոթֆոնտեան (Բնագիտութիւն, Վիեննա 1856, էջ 105) կը մեկնէր այս -yl(e) որուն ծագումն է — յն. hylé, հիւլէ բառը: Եւ յարմար կը գտնէր թարգմանել -իլ-ը, այսպէս՝ acétyle քացիաթիլ-ը, éthyle Էթիլ-ը եւն: Բ Բ ալ յաճախ գրած է այսպէս, օրինակ գերմ. Salicyl քալիսիլ-ը եւն: Բ գրած է այս բառերը՝ քացիաթիլ-ը, Էթիլ-ը (Գ Էթիլաթիլ), քալիսիլ-ը: Լ գրած է նոյնները՝ քացիաթիլ, Էթիլ, քալիսիլ: 2՝ քացիաթիլ, Էթիլ, իսկ salicylic քալիսիլ (թթու):

³ Լ, որ բառամթերքի կողմանէ ճոխագոյն է, տասնի չափ բարդութիւններ գրած է այս բառիս շարքին մէջ, որոնցմէ յիշեալ միայն վերջին երկուքը, propylphénol Լ «պրոպիլաթիլաթիւն», եւ propylpyridine Լ «պրոպիլաթիլաթիլ»: